

օրիորդը զաւակ է ունենում և խայտառակութիւնից ազատուելու համար գետն է ձգում մանկանը. բայց շուտով ինքն էլ խղճի խայթից տանջուելով՝ նոյն գետի ալիքներին է զոհ գնում: Ահա այս ողբերգական փոքրիկ զրոյցն է «Սիրոյ զոհների» պարունակութիւնը, որ հեղինակը արձակ գրելու փոխարէն ոտա՛նաւորով է շողկապել և անունը դրել «պօէմա»: Երևի պ. Շեքամն էլ այն կարծիքի է, որ եթէ ամենասովորական մտքերն էլ փոխանակ կանոնաւոր և ընդարձակ նախադասութիւններով արտայայտելու՝ երկար աշխատանք գործ դնելով ու արուեստական կերպով նման յանգերով վերջացնեն՝ գրուածքը կլինի բանաստեղծութիւն և գրողն էլ բանաստեղծ... Սակայն չափը պահպանելու համար երկար մտածելու էլ կարիք չկայ, կարելի է բառերը ծոռել և պակասը լրացնել. օրինակ. «Հալաւի տակից հասունակ (?) կուրծքը» (էջ 6) «կատարեալ հօրը (?) դէմքի գծերը» (էջ 10) «եւ իւր կեղծ սիրոյ մանուկ մեխակը» (?) (էջ 10) «Ամբողջ մարմնով դրո դրո (?) դողում էր» (էջ 11). «նա նոյն պատկերը միշտ տեսանում» (?) էր» (էջ) 13 և այլն:

3). Մեղք. Եսայեան. Մի ռաբրի... պատկեր Թալաւանու կիանքից. Թիֆլիս 1905. էջ 14:

Բազուի իրականութեան մի հատուածի պարզ ու անպաճոյճ պատկերն է «մի ըուրլին». նկարագրուած է նաւթային գործարանի կառավարչի յարաբերութիւնը իւր գործակատարի և բանուորների հետ: Այժմ այսպիսի վերաբերմունքը կարելի է անցած-գնացած օրերին վերագրել. ամբողջ Ռուսաստանի բանուորական շարժումը գործարանների կառավարիչներին ստիպեց աւելի մարդավայել ու քաղաքավարի վերաբերուել իրենց նման մարդ արարածներին: Քմահաճոյքն ու չարամտութիւնն այժմ առաջուայ դերը չեն կարող խաղալ. օրէնք և արդարութիւն պահանջելն ամեն մի անհատի անկապտելի իրաւունքն է...

Գրքոյը կարդացուած է աւանց ձանձրոյթի, սակայն հեղինակը գրուածքը խճողել է բազմաթիւ օտար բառերով, որ բոլորովին աւելորդ բռն է. օրինակ «բաբոյլներ», «տաքեր», «պրոմըսլի պրիկաշչիկ», «դագաւոր». «աստանօվկա», «դաւէրնի», «բաղի խրիստա», «րեկամենդացիա», «սկւաժինա». «տրուբաներ», «ժեղոնկա», «սերիօզնի», «կնիժիկա», «բաւո՛շտ» ևւ այլն.